


Հաստատված է

«ՄԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Խորհրդի

քիվ 16/01-18.12.14թ. որոշմամբ

Ուժի մեջ է մտնում 18.12.2014թ.

Խորհրդի նախագահ

 Է. Մուրխաչյան

«ՄԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Բովանդակություն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	2
2. ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	2
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ	4
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ	4
5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ	7
7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ	7
8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ	8
9. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ	9
10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ	9
11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ	9
12. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ	10
13. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	11
14. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	12
15. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ..	13
16. ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ	15
17. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ, ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ	16
18. ԾԱՆՈՒՑՈՒՄ	17
19. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)	17
20. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ	18

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի և այլ իրավական ակտերին համապատասխան:

1.2. «ՄԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՓԲԸ-ն իրականացնում է Մասնագիտական պատասխանատվության ապահովագրությունը համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի (Ապահովագրության տեսակները և դասերը) 2-րդ մասի (ոչ կյանքի ապահովագրություն) 13 կետի:

1.3. Ապահովագրության պայմանագրով կամ վկայագրով (այսուհետ՝ Պայմանագիր) Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրում սահմանված վճարի (այսուհետ՝ ապահովագրավճար) դիմաց Պայմանագրով նախատեսված դեպքի (այսուհետ՝ ապահովագրական պատահարի) ի հայտ գալու պարագայում հատուցել Ապահովադրին կամ այն անձին, ում օգտին կնքվել է Պայմանագիրը (այսուհետ՝ Շահառու), ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասը՝ (ապահովագրական հատուցում) Պայմանագրում սահմանված գումարի (ապահովագրական գումար) շրջանակներում:

1.4. Սույն Պայմանների հիման վրա կնքված Պայմանագրով կարող է ապահովագրվել մասնագիտական գործունեություն իրականացնող Ապահովադրի կամ նրա կողմից մատնանշված այլ անձի (այսուհետ՝ Պատասխանատու անձ) մասնագիտական պատասխանատվության ռիսկը, որն առաջանում է աշխատանքային պարտականություններն իրականացնելու ընթացքում մասնագիտական անվտանգության և/կամ սխալի հետևանքով երրորդ անձանց պատճառված վնասը:

1.5. Սույն Պայմանների համաձայն՝ կարող է ապահովագրվել ցանկացած կազմակերպչիրավական ձևի իրավաբանական անձի կամ ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ պատասխանատվության ռիսկը, որոնք իրականացնում են մասնագիտական գործունեություն, և որոնք ունեն մասնագիտական գործունեության կոնկրետ տեսակի համար լիցենզիա կամ թույլտվություն:

1.6. Պայմանագիրը համարվում է կնքված այլ անձի (Շահառուի) օգտին, ում կարող է պատճառվել վնաս:

1.7. Սույն Պայմանների համաձայն կնքված Պայմանագրերը գործում են ՀՀ և ԼՂՀ տարածքներում, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

1.8. Պայմանները կցվում են Պայմանագրին՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը և պարտադիր են Ապահովագրողի և Ապահովադրի համար (այսուհետ՝ նաև Պայմանագրի կողմեր):

1.9. Պայմանագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են Պայմանագրով նախատեսել Պայմանների առանձին դրույթների փոփոխում, չկիրառում կամ այլ դրույթներ, որոնք չեն հակասում օրենքին և այլ իրավական ակտերին:

2. ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ապահովագրող՝ «ՄԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Ապահովագրող կամ Ընկերություն):

Ապահովադիր՝ Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքած, օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպչիրավական ձևի իրավաբանական անձ կամ անհատ

ձեռնարկատեր, որն իրականացնում է մասնագիտական գործունեություն՝ համապատասխան լիզենզիայի կամ օրենսդրությամբ սահմանված այլ թույլատրության հիման վրա:

Շահառու՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու պարագայում ապահովագրության Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ:

Երրորդ անձ՝ ցանկացած անձ, ով գտնվում է պայմանագրային հարաբերությունների մեջ Ապահովադրի հետ, և ստանում մասնագիտական ծառայություն:

Ապահովադրի աշխատակից (Պատասխանատու անձ)՝ Ապահովադրի աշխատակիցն անձ է, որն Ապահովադրի հետ գտնվում է աշխատանքային կամ քաղաքացիական իրավահարաբերությունների մեջ՝ համաձայն կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրի, հետագայում նաև Պատասխանատու անձ:

Ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր՝ Ապահովագրողի և Ապահովադրի միջև գրավոր համաձայնություն, որի գործողության ընթացքում Ապահովագրողը պարտավոր է ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում (բացառությամբ՝ սույն Պայմաններում նախատեսված Բացառությունների) ապահովագրական գումարի սահմաններում հատուցում վճարել Ապահովադրին (կամ Շահառուին), իսկ Ապահովադիրը պարտավոր է վճարել Պայմանագրում սահմանված ապահովագրավճարը նշված չափով, կարգով և ժամկետներում:

Ապահովագրական ռիսկ՝ որոշակի հավանականությամբ և պատահականությամբ ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով առաջացող վնասի հնարավոր մեծությունն է:

Ապահովագրական պատահար՝ պատահար, որի ի հայտ գալու դեպքում (բացառությամբ սույն Պայմաններում նախատեսված Բացառությունների) Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրին կամ Շահառուին վճարել ապահովագրական հատուցում սույն Պայմաններում և Պայմանագրում նշված կարգով:

Ապահովագրական հատուցում (այսուհետ՝ Հատուցում)՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում Ընկերության կողմից Պայմանագրի հիման վրա Ապահովադրին կամ Շահառուին վճարման ենթակա գումար՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով:

Ապահովագրական գումար՝ Պայմանագրի գործողության ժամանակահատվածի ընթացքում Պայմանագրով նախատեսված Ապահովագրողի պատասխանատվության առավելագույն չափ:

Ապահովագրավճար՝ Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարման ենթակա գումար:

Չհատուցվող գումար՝ վնասի չափ, որը չի հատուցվում Ապահովագրողի կողմից, և որը սահմանվում է Պայմանագրով՝ կոնկրետ գումարի տեսքով կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ:

Ռետրոակտիվ ամսաթիվ՝ Պայմանագրի պայման, համաձայն որի Ապահովագրողը կրում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորություն այն ապահովագրական պատահարների գծով, որոնք տեղի են ունեցել մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը, սակայն նրանց տեղի ունենալու մասին հայտնել են Ապահովագրողին Պայմանագրի գործողության ընթացքում:

Հայցի տեղեկացման դրույթ (Claims-maid Clause)՝ ապահովագրության (ծածկույթի) պայման, համաձայն որի Ապահովագրողը կրում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորություն այն ապահովագրական պատահարների գծով, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, և որոնց մասին Ապահովադիրը տեղեկացվել է Պայմանագրի գործողության ժամանակ, և նույն ժամանակում պատահարի մասին նա տեղեկացրել է Ապահովագրողին:

Պատահարի տեղեկացման դրույթ (Occurrence Clause)՝ ապահովագրության (ծածկույթի) պայման, համաձայն որի Ապահովագրողը կրում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորություն այն ապահովագրական պատահարների գծով, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո/սկսած, սակայն նրանց տեղի ունենալու մասին հայտնել են Ապահովադիրին և Ապահովագրողին ցանկացած ժամանակ, այդ թվում՝ Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1. Սույն Պայմանների համաձայն՝ ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադիրի՝ ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը՝ կապված իր պատասխանատվության ռիսկի ի հայտ գալու, որը կարող է վնաս հասցնել երրորդ անձանց կյանքին, առողջությանը, գույքին կամ ֆինանսական միջոցներին՝ իր (իր աշխատակիցների) կողմից Պայմանագրում նշված մասնագիտական գործունեություն իրականացնելիս:

3.2. Հատուցման ենթակա են նաև իւելամիտ ծախսերը՝ կապված դատական և արտադատական կարգով գործերի վարման հետ, որոնք առաջացել են մասնագիտական գործունեության ընթացքում հասցված վնասի հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

3.3. Ապահովագրողի հատուցում վճարելու պարտավորությունը առաջանում է, եթե՝

ա) Երրորդ անձի գույքային շահերին հասցված վնասը գտնվում է ուղղակի պատճառական կապի մեջ Ապահովադիրի՝ որպես մասնագիտական ծառայություն կամ աշխատանքներ մատուցող անձի գործունեության հետ,

բ) Երրորդ անձի գույքային շահերին հասցված վնասը պատճառված է Պայմանագրում նշվածապահովագրության տարածքում և Պայմանագրում նշված ժամանակահատվածում,

գ) Վնասի պատճառման իրադարձությունը տեղի է ունեցել այն գործունեության ընթացքում, որի համար Ապահովադիրն ունի համապատասխան լիզենզիա և/կամ օրենքով նախատեսված այլ թույլտվություն:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

4.1. Ապահովագրական պատահարը Պայմանագրով նախատեսված պատահական դեպքն է, որի տեղի ունենալու դեպքում ծագում է Ապահովադիրին (Շահառուին) ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը:

4.2. Պայմանների համաձայն՝ ապահովագրական պատահար են համարվում այն իրադարձությունները (բացառությամբ սույն Պայմաններում նշված Բացառությունների), որոնք հետևանք են Պայմանագրում սահմանված Ապահովադիրի մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում թույլ տրված սխալների, անուշադրության,

վրիպումների, անփութության կամ բացթողումների՝ և որոնց պատճառով Երրորդ անձի (անձանց) կողմից պահանջ է ներկայացվել պատճառված վնասի հատուցման համար:

4.3. Անփութություն ասելով՝ հասկացվում են Ապահովադրի և/կամ նրա Պատասխանատու անձի սխալները, բացթողումները, անգործությունը, որոնք հետևանք են այդ անձի՝ ինչպես ոչ բավարար ուշադրության և ջանասիրության, այնպես էլ ոչ բավարար փորձառության:

4.4. Եթե Պայմանագրում այլ բան նախատեսված չէ, ապա ապահովագրությունն իրականացվում է բացառապես «Հայցի տեղեկացման դրույթ»-ի հիման վրա (Claims-raid clause):

4.5. Եթե վնասը հայտնաբերվել է Պայմանագրի գործողության ժամկետում, սակայն տեղի է ունեցել մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը, ապահովագրական հատուցումը ենթակա է վճարման միայն այն դեպքում, եթե Պայմանագիրը թողարկված է Ռետրոակտիվ ամսաթվով:

4.6. Մեկ պատահարի հետևանքով մի քանի Շահառուներին հասցված վնասը համարվում է մեկ ապահովագրական պատահար:

5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Սույն Պայմանների համաձայն՝ ապահովագրական պատահար չեն համարվում և հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են՝

- 5.1.1. ապահովագրության տարածքից դուրս,
- 5.1.2. Ապահովադրի իրավասությունների շրջանակի գերազանցման արդյունքում,
- 5.1.3. Ապահովադրի (Պատասխանատու անձի) կողմից ծառայություններ մատուցելու ընթացքում համապատասխան վերահսկողության չպահպանման արդյունքում,
- 5.1.4. պատահարի կամ իրադարձության հետևանքով, որը մինչև Պայմանագրի կնքումը հայտնի է եղել Ապահովադրին, կամ Ապահովադիրը պետք է ակնկալեր, որ դրանք կարող են բերել իր նկատմամբ հայցի ներկայացման,
- 5.1.5. պատահարի առաջացման վերաբերյալ Պայմանագրով և/կամ Պայմաններով սահմանված կարգով և ժամկետում Ապահովադրի (Շահառուի) կողմից Ապահովագրողին չտեղեկացման կամ ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշման կայացման համար անհրաժեշտ տեղեկատվության կամ փաստաթղթի չտրամադրման կամ պատահարի առաջացման պայմանների, բնույթի կամ վնասի չափի որոշման աշխատանքներում Ապահովագրողի կամ նրա ներկայացուցչի գործողություններին խոչնդոտ հանդիսանալու դեպքերում.
- 5.1.6. Ապահովադրի և/կամ Պատասխանատու անձի գործունեության իրականացման թույլտվության կամ լիցենզիայի գործողության ժամկետի լրանալուց կամ դադարեցումից հետո կամ կասեցված լինելու ընթացքում մասնագիտական գործունեություն իրականացնելիս թույլ տված սխալների կամ բացթողումների հետևանքով:
- 5.1.7. Ապահովադրի, ի դեմս ղեկավարի (լիազորված անձի), իրավաբանական անձի այլ մարմնի (ղեկավարություն, տնօրինություն) դիտավորության արդյունքում, ինչպես նաև այն անձանց, ովքեր թեկուզ և հանդես են գալիս իրենց անունից, բայց գործում են Ապահովադրի գիտությամբ և ի օգուտ նրա հետաքրքրությունների,
- 5.1.8. Ապահովադրի՝ համապատասխան գործողության համար չլիազորված աշխատակցի (Պատասխանատու անձի) գործողությունների արդյունքում,
- 5.1.9. պատահարի առաջացմանն ուղված Ապահովադրի կանխամտածված, դիտավորյալ կամ հանցավոր գործողության կամ անգործության, օրենսդրության և կամ այլ իրավական ակտերի կոպիտ խախտման հետևանքով:

- 5.1.10. Ապահովադրի կողմից ապահովագրության օբյեկտի վերաբերյալ դիտավորյալ, ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելու արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, որոնք էական նշանակություն չեն ունեցել ապահովագրական ռիսկի գնահատման համար:
- 5.1.11. Ապահովադրի, նրա ներկայացուցչի կամ Շահառուի կողմից պատահարի առաջացմանն ուղղված կանխամտածված, անօրինական գործողությունը, որը հաստատվել է դատարանի կողմից կայացված դատական ակտով կամ պետական այլ մարմինների ուժի մեջ մտած որոշումներով:
- 5.1.12. պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ այդ մարմինների պաշտոնատար անձանց անօրինական գործողությունների (անգործության) հետևանքով:
- 5.1.13. պայմանագրային պարտավորությունների չկատարման համար նախատեսված տուգանքների (տույժ/տուգանք) գումարները, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,
- 5.1.14. երաշխիքային կամ նմանատիպ պարտավորությունների կատարման արդյունքում,
- 5.1.15. Ապահովադրի (Պատասխանատու անձի) մոտ տնօրինման, տիրապետման, օգտագործման հիմունքներով կամ այլ՝ օրենքով կամ այլ պայմանագրային հիմքով գտնվող գույքի ոչնչացման (վնասման) արդյունքում,
- 5.1.16. ցանկացած տեսքով դրամական միջոցների ոչնչացման (վնասման), կորստի արդյունքում (դրամական միջոցների կորուստ ասելով պետք է հասկանալ դրանց ֆիզիկական (նյութական) վնասումը, ոչնչացումը, կորուստը),
- 5.1.17. իրավասու մարմինների կողմից պարտադիր վճարների և/կամ տուգանքի և/կամ տույժերի նշանակման արդյունքում, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:
- 5.1.18. Ապահովադրի (Պատասխանատու անձի) ակոհոլի, թմրանյութերի կամ տոքսիկ ընդարմացման վիճակում գտնվելու արդյունքում:
- 5.1.19. օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:
- 5.2. Ապահովագրական պատահար չեն համարվում այն իրադարձությունները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են՝
- 5.2.1. պատերազմի, զինված ներխուժման, թշնամաբար տրամադրված պետությունների գործողության (անկախ այն բանից, պատերազմ հայտարարված է, թե ոչ), քաղաքացիական պատերազմի, ապստամբության, հեղափոխության կամ խռովության հետ,
- 5.2.2. գույքի բռնագրավման կամ ազգայնացման, ռեկվիզիցիայի, քանդման կամ կործանման հետ, որը տեղի է ունեցել պետական կառավարման մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների կարգադրությամբ,
- 5.2.3. ահաբեկչական գործողությունների, պատանդներ բռնելու կամ դիվերսիայի հետ,
- 5.2.4. գործադուլների, զանգվածային անկարգությունների կամ ժողովրդական հուզումների հետ,
- 5.2.5. ցանկացած տիպի աղտոտվածության, քիմիական կամ այլ կենսաբանական նյութերի և հումքերի ներգործության հետ, անհաղթահարելի ուժի գործողության հետ
- 5.2.6. իոնացված ճառագայթման կամ ռադիոակտիվ նյութերի աղտոտման հետ՝ ցանկացած միջուկային վառելիքից կամ միջուկային վառելիքի այրումից ստացված միջուկային թափոններից, ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ կամ ցանկացած վտանգավոր նախադրյալներ պարունակող նյութերից և/կամ ցանկացած պայթուցիկ միջուկային ագրեգատից կամ դրանում առկա միջուկային բաղադրիչից,
- 5.2.7. թունավոր բորբոսասնկի, էլեկտրամագնիսական դաշտի ուժերի, կապարի, համակարգչային վիրուսների ազդեցության հետ, ցանկացած կրիչների (այդ թվում՝ թղթային) վրայից ինֆորմացիայի կորստի հետ,

- 5.2.8. կառուցվածքային տարրերի, սարքավորումների, նյութերի բնական մաշվածության, ինչպես նաև շահագործման նորմատիվային ժամկետներից ավել ժամկետում օգտագործելու հետ,
- 5.2.9. երրորդ անձի կորցրած եկամուտը և/կամ շուկայում իր դիրքի կորստի կամ նվազման հետ:
- 5.3. Պայմաններով ենթակա չեն ապահովագրման գործնական պրակտիկայում ընդունված հետևյալ պատասխանատվության ապահովագրության տեսակները՝
- ա) Ընդհանուր (քաղաքացիական) պատասխանատվություն
 - բ) Գործատուի պատասխանատվություն
 - գ) Տնօրենների և ղեկավարների պատասխանատվություն,
 - ե) Պահեստավորման պատասխանատվություն,
- զ) Երրորդ անձանց հանդեպ ավտոմեքենաների սեփականատերերի քաղաքացիական պատասխանատվություն,
- է) Արտադրված ապրանքների որակի պատասխանատվություն
 - ը) Աղտոտման պատասխանատվություն,
 - թ) Վարձակալների պատասխանատվություն:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

- 6.1. Ապահովագրության պայմանագիրը գործում է ՀՀ և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքներում, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 6.2. Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության Պայմանագրում, Ապահովագրության տարածք է հանդիսանում այն տարածքը, որի շրջանակներում Ապահովադիրն իրականացնում է իր հիմնական գործունեությունը կամ իր գործողությունները:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

- 7.1. Ապահովագրական գումարն Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ որոշված դրամական արտահայտությամբ գումար է, որի սահմաններում Ապահովագրողը պատասխանատվություն է կրում Պայմանագրով և Պայմաններով սահմանված իր պարտավորությունների կատարման համար:
- 7.2. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:
- 7.3. Եթե Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրողը կատարել է ապահովագրական հատուցում, ապա ապահովագրական գումարը նվազեցվում է կատարված հատուցման չափով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:
- 7.4. Ապահովադիրը կարող է դիմել Ապահովագրողին ապահովագրական գումարի նախկին չափը վերականգնելու պահանջով, որն իրականացվում է լրացուցիչ ապահովագրավճար վճարելու և համաձայնագիր կնքելու միջոցով:
- 7.5. Ընդհանուր ապահովագրական գումար կամ ագրեգատային սահմանաչափ է համարվում Ապահովագրության պայմանագրում սահմանված դրամային գումարը, որի սահմաններում Ապահովագրողը պարտավոր է կատարել ապահովագրական հատուցումներ Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարներ տեղի ունենալու դեպքում:

7.6. Ապահովագրական գումարը (պատասխանատվության սահմանաչափը և կամ ենթասահմանաչափը) սահմանվում է կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ դրամով:

7.7. Ապահովագրության պայմանագրի կնքման ընթացքում կարող են նաև սահմանվել՝

- ա) մեկ ապահովագրական պատահարի համար վճարվող ապահովագրական հատուցման սահմանային գումարներ (մեկ ապահովագրական պատահարի համար Ապահովագրողի պատասխանատվության առավելագույն սահմանաչափը)
- բ) ապահովագրական հատուցման սահմանային գումարներ (մասնագիտական պատասխանատվության սահմանաչափեր)՝ կապված հատուկ տեսակի վնասների հետ (կյանքին և/կամ առողջությանը, գույքին հասցված վնաս)
- գ) ապահովագրական հատուցման սահմանային գումարներ (մասնագիտական պատասխանատվության սահմանաչափեր)՝ կապված տուժած մեկ ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ,
- դ) ապահովագրական հատուցումների այլ սահմանաչափեր (մասնագիտական պատասխանատվության սահմանաչափեր):

7.8. Եթե Պայմանագրում ապահովագրական գումարը արտահայտված է արտարժույթով, ապա հատուցումը հաշվարկվում և վճարվում է ՀՀ դրամով՝ վնասի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի սահմանված արտարժույթային փոխարժեքով :

8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

8.1. Ապահովագրավճարը Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումարն է:

8.2. Ապահովագրավճարը հաշվարկվում է՝ ելնելով ապահովագրական գումարի չափից, ապահովագրական սակագնից և ապահովագրական ռիսկի բնութագրերից և այլ գործոններից, որոնք կարող են ազդել ապահովագրական պատահարի առաջացման և վնասի չափի մեծության վրա:

8.3. Ապահովագրավճարը կողմերի համաձայնությամբ կարող է վճարվել միանվագ կամ մաս-մաս:

8.4. Ապահովադրի կողմից ապահովագրավճարի վճարումն Ապահովագրողին կարող է իրականացվել ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ ձևով: Ապահովագրավճարի վճարման կարգը սահմանվում է Պայմանագրով:

8.5. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով :

8.6. Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական (սկսած երկրորդից) Ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից հինգ օր (լրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց այդ մասին Ապահովադրին նախապես ծանուցելու:

9. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

9.1. Կողմերի համաձայնությամբ Պայմանագրով կարող է սահմանվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար, որը կիրառվում է յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում:

9.2. Պայմանական չհատուցվող գումարի դեպքում Ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ վնասը չի գերազանցում ապահովագրության պայմանագրով նախատեսված չհատուցվող գումարի չափը և պարտավոր է վճարել հատուցումն ամբողջությամբ, եթե դրա մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:

9.3. Ոչ պայմանական չհատուցվող գումար սահմանելու դեպքում Ապահովագրողն ազատվում է որոշակի մասով հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից: Չփոխհատուցվող գումարը սահմանվում է բացարձակ մեծությամբ կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ: Եթե ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունենում մի քանի ապահովագրական պատահար, չհատուցվող գումարը հաշվի է առնվում դրանցից յուրաքանչյուրի դեպքում:

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

10.1. Պայմանագիրը կնքվում է Ապահովադրի կողմից բանավոր դիմումի կամ Ապահովագրողի կողմից սահմանված գրավոր դիմում-հարցաթերթիկի հիման վրա:

10.2. Պայմանագիրը կնքվում է սույն Պայմաններին համապատասխան, որոնք կազմում են Ապահովագրության Պայմանագրի անբաժանելի մասը:

10.3. Պայմանագիր կնքելիս Ապահովադիրը պետք է Ապահովագրողին հայտնի իրեն հայտնի բոլոր այն հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ռիսկի գնահատման համար:

10.4. Ապահովագրության Պայմանագիրը կնքելիս, ինչպես նաև դրա գործողություն ընթացքում Ապահովագրողն իրավունք ունի անցկացնել Ապահովադրի գործունեության կամ գործողությունների իրականացման վայրի զննում:

10.5. Պայմանագրի կնքումից հետո ապահովագրության դիմումը դառնում է դրա անբաժանելի մասը:

10.6. Պայմանագրի ժամկետի գործողության ընթացքում Պայմանագիրը կորցնելու դեպքում Ապահովագրողը՝ Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա նրան տրամադրում է Պայմանագրի կրկնօրինակը: Պայմանագրի կրկնօրինակը տրամադրվում է անվճար:

10.7. Պայմանագիրը թողարկվում է մինչև մեկ տարի ժամկետով, եթե այլ ժամկետ նախատեսված չէ:

11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ

11.1. Պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է՝

- ա) Ապահովագրողի կողմից Պայմանագրով նախատեսված պարտականությունները լրիվ ծավալով կատարելու դեպքում,

- բ) Ապահովադրի կողմից Պայմանագրում նշված ժամկետներում և չափով ապահովագրավճարը չվճարելու դեպքում,
 - գ) Ապահովադրի, եթե նա իրավաբանական անձ է, լուծարման, եթե ֆիզիկական անձ է՝ մահվան, իսկ եթե անհատ ձեռնարկատեր՝ անհատ ձեռներեցության դադարեցման դեպքում:
 - դ) Պայմանագրից Ապահովադրի վաղաժամկետ հրաժարվելու դեպքում,
 - ե) Օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:
- 11.2. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրն՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ գրավոր ծանուցելով Ապահովագրողին:
- 11.3. Ապահովադրի կողմից Պայմանագրի վաղաժամկետ լուծելու դեպքում՝ վերջինիս վերադարձվում են Պայմանագրի չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ մասհանելով 10 (տասը) տոկոսի չափով գործավարման ծախսեր, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Սակայն, եթե Պայմանագրի լուծման դիմումի ներկայացման պահին առկա է բացված և/կամ վճարված և/կամ վճարման ենթակա հայց, ապա անկախ այդ հայցի գումարի չափից ապահովագրավճար հետ չի վերադարձվում:
- 11.4. Այն դեպքում, երբ Ապահովադրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Պայմանագրի պայմանների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում վճարված ապահովագրավճարներն ամբողջությամբ, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 11.5. Ապահովագրողի լուծարման դեպքում, վերջինս պարտավոր է Ապահովադրին վերադարձնել Պայմանագրի չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը:
- 11.6. Պայմանագիրն առջինչ կամ անվավեր է համարվում օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:
- 11.7. Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարներն ամբողջությամբ:
- 11.8. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել նաև Ապահովագրողի և Ապահովադրի գրավոր համաձայնությամբ
- 11.9. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

12. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

- 12.1. Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին իրեն հայտնի դարձած այն հանգամանքների էական փոփոխության մասին, որոնք հաղորդվել են Ապահովագրողին Պայմանագրի կնքման ընթացքում, այդ թվում դիմում-հարցաթերթիկում և կարող են ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա: Հանգամանքների փոփոխությունները համարվում են էական, երբ նրանք փոփոխվել են այնքանով, որ եթե Կողմերը կարող էին խելամտորեն կանխատեսել այն, ապա Պայմանագիրը չէր կնքվի կամ կնքվեր այլ պայմաններով:
- 12.2. Ապահովագրողը, որը տեղեկացել է ռիսկի աստիճանի մեծացման վրա ազդող հանգամանքների մասին, իրավունք ունի պահանջելու Պայմանագրի պայմանների փոփոխություն կամ լրացուցիչ Ապահովագրավճարի վճարում՝ ապահովագրական ռիսկի մեծացմանը համապատասխան:

12.3. Եթե Ապահովադիրը հրաժարվում է Պայմանագրի մեջ փոփոխություններ մտցնել կամ լրացուցիչ Ապահովագրավճար վճարել, Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու միակողմանի լուծելու Պայմանագիրը:

12.4. Ապահովագրողն իրավունք չունի պահանջել Պայմանագրի վաղաժամկետ լուծում, եթե ապահովագրական ռիսկի մեծացման վրա ազդող հանգամանքները վերացել են:

13. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13.1. Ապահովագրողը պարտավոր է՝

- ա) Ապահովադիրին ծանոթացնել Պայմաններին և Պայմանագրի պայմաններին.
- բ) Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում վճարել ապահովագրական հատուցում Ապահովադիրին.
- գ) Ապահովագրական գումարի և առկա ենթասահմանաչափի սահմաններում հատուցել Ապահովադիրի այն ծախսերը, որոնք ողջամտության սահմաններում կատարվել են ապահովագրական պատահարի ընթացքում վնասների կանխման կամ նվազեցման նպատակով կամ Ապահովագրողի ցուցումներին համապատասխան.
- դ) Չիրապարակել կամ այլ կերպ չտարածել Ապահովադիրի անձնական շահերի, գույքային դրության և առևտրային կամ բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունները.
- ե) կատարել օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով և/կամ Պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

13.2. Ապահովագրողն իրավունք ունի՝

- ա) ստուգել Ապահովադիրի կողմից ներկայացված տվյալների իսկությունը և Ապահովադիրի կողմից ռիսկի աստիճանի գնահատման կամ վնասի չափի որոշման վրա ազդող տեղեկությունները
- բ) ինքնուրույն պարզել, իսկ անհրաժեշտության դեպքում հրավիրել անկախ մասնագետի (փորձագետի)՝ ռիսկի աստիճանը կամ պատճառված վնասի հանգամանքները և (կամ) չափը որոշելու համար,
- գ) Ապահովադիրի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական բրոքերի կամ ապահովագրական գործակալի միջոցով.
- դ) հարցումով դիմել համապատասխան լիազոր (իրավասու) մարմիններին՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառները հաստատող փաստաթղթեր կամ այլ տեղեկությունները ստանալու նպատակով.
- ե) պահանջել անվավեր ճանաչել Պայմանագիրը, եթե վերջինիս կնքումից հետո բացահայտվի, որ Ապահովադիրն Ապահովագրողին նախապես հաղորդել է կեղծ տեղեկություններ այն հանգամանքների մասին, որոնք ունեն էական նշանակություն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը և դրա տեղի ունենալու արդյունքում առաջացած հնարավոր վնասների չափը որոշելու համար
- զ) ավելացնել ապահովագրավճարի չափը կամ դադարեցնել Պայմանագիրը, եթե վերջինիս գործողության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի մեծացում,
- է) օրենքի, այլ իրավական ակտերի, Պայմաններով և Պայմանագրի համաձայն մերժել ապահովագրական հատուցման վճարումը,
- ը) իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով և Պայմանագրով իրեն վերապահված կամ չարգելված այլ գործառնություններ:

13.3. Ապահովադիրը պարտավոր է՝

- ա) Պայմանագրում նշված կարգով և ժամկետում վճարել ապահովագրավճարը,
- բ) Պայմանագրի կնքման ժամանակ և դրանից հետո Ապահովագրողին հայտնել ապահովագրական ռիսկի գնահատման համար էական նշանակություն ունեցող՝ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները,
- գ) Ապահովագրողին հայտնել ապահովագրական օբյեկտի գծով առկա այլ ապահովագրության պայմանագրերի մասին,
- դ) երրորդ անձանց կողմից վնասի հատուցման վերաբերյալ պահանջի ներկայացման (պատահարի առաջացման) դեպքում այդ մասին անհապաղ, բայց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում տեղյակ պահել Ապահովագրողին: Եթե Ապահովադիրն Ապահովագրողին չի հայտնել պատահարի մասին սույն ենթակետում նշված կարգով և ժամկետում, ապա Ապահովագրողն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը,
- ե) պատահարի առաջացման դեպքում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել վնասի կանխման կամ նվազեցման ուղղությամբ.
- զ) Ապահովագրողին ներկայացնել պատահարի վերաբերյալ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը, որոնք հնարավորություն կտան պարզել պատահարի պատճառներն ու վնասի չափը.
- է) առանց Ապահովագրողի համաձայնության երրորդ անձին չվճարել կամ չտալ վնասի հատուցման վերաբերյալ ոչ մի ուղղակի կամ անուղղակի խոստումներ և կամ պարտավորության իրականացման երաշխիքներ
- ը) պատճառված վնասի չափի որոշման ժամանակ ապահովել Ապահովագրողի կամ նրա ներկայացուցչի պարտադիր մասնակցությունը.
- թ) Ապահովագրողին ցուցաբերել հնարավոր աջակցություն դատական և արտադատական պաշտպանության ընթացքում
- ժ) կատարել օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով և Պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

13.4. Ապահովադիրն իրավունք ունի՝

- ա) Ապահովագրողից պահանջել, որպեսզի վերջինս ներկայացնի իր պետական գրանցման վկայականը և գործունեության թույլտվությունը հավաստող փաստաթղթերը.
- բ) ծանոթանալ Պայմաններին.
- գ) Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական բրոքերի կամ ապահովագրական գործակալի միջոցով.
- դ) օրենքի, այլ իրավական ակտերի, Պայմանների և Պայմանագրի համաձայն ստանալ ապահովագրական հատուցում.
- ե) Պայմանագիրը կորցնելու դեպքում ստանալ դրա կրկնօրինակը.
- զ) իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով և Պայմանագրով իրեն վերապահված կամ չարգելված այլ գործառնություններ:

14. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14.1. Ապահովագրական պատահարի կամ ցանկացած այլ դեպքի, որը կարող է հետագայում հանգեցնել ապահովագրական պատահարի, տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը պարտավոր է տեղի ունեցած պատահարի մասին անհապաղ, ցանկացած հասանելի և

տեղեկացման փաստը հավաստող եղանակով (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային նամակ, կարճ բջջային հաղորդագրություն և այլն) տեղեկացնել Ապահովագրողին (նրա ներկայացուցչին) Պայմանագրում նշված կոնտակտային տվյալներով՝ հեռախոսահամարներով, իսկ պատահարը տեղի ունենալուց հետո ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին ներկայացնել հայտային դիմում:

14.2. Եթե Ապահովադիրն Ապահովագրողին չի հայտնել ապահովագրական պատահարի մասին Պայմանների 14.1. կետում և/կամ Պայմանագրում նշված կարգով և/կամ ժամկետներում, ապա Ապահովագրողն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը,

14.3. Ապահովադիրը պարտավորվում է իր կողմից կամ իր անունից չընդունել, չառաջարկել, չխոստանալ կամ չվճարել որևէ հատուցման պահանջ՝ առանց Ապահովագրողի կողմից գրավոր համաձայնության: Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողի պահանջով վերջինիս տրամադրել Ապահովադրի անունից պետական մարմինների կամ դատարանի առջև հանդես գալու լիազորություն, ինչպես նաև Ապահովագրողին տրամադրել վերջինիս կողմից պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

14.4. Ցանկացած պահանջ, ծանուցագիր, դատական ծանուցում կամ իրավասու մարմնի վարույթին վերաբերող փաստաթուղթ պետք է անմիջապես փոխանցվի Ապահովագրողին՝ դրանց ստանալուց հետո:

14.5. Սույն գլխի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցումը:

15. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

15.1. Ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովագրողի կողմից օրենքին, այլ իրավական ակտերին, Պայմաններին և Պայմանագրին համապատասխան՝

15.2. Ապահովագրական պատահարի պատճառը և/կամ վնասի չափը որոշվում է հետևյալ կերպ՝

ա) Ապահովադրի, Ապահովագրողի և երրորդ անձի հանդեպ, ում հասցված է վնաս, կարող է ներկայացվել հայցի կարգավորման արտադատական գործընթաց, եթե առկա են ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը, նրա բնույթը, պատճառը և վնասի չափը անվիճելի հաստատող փաստաթղթերը:

բ) Կողմերի միջև տարաձայնությունների առկայության դեպքում՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա:

15.3. Ապահովագրողն իրավունք ունի անձամբ հետաքննելու և պարզելու ապահովագրական պատահարի հանգամանքները և պատճառները:

15.4. Ապահովագրողը պատահարի տեղի ունենալուց հետո իրավունք ունի դիմել անկախ փորձագետների՝ ապահովագրական պատահարի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու նպատակով, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս՝ հիմնվել վերջիններիս եզրակացությունների վրա:

15.5. Անհրաժեշտության դեպքում տեղի ունեցած պատահարի վերաբերյալ տեղեկություն և/կամ փաստաթղթեր ստանալու նպատակով Ապահովագրողը կարող է դիմել պետական մարմինների, կազմակերպությունների կամ այլ անձանց, ովքեր տիրապետում են ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվության:

15.6. Սույն Պայմաններով նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո Ապահովագրողը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է որոշում՝ ապահովագրական հատուցումը վճարելու կամ այն մերժելու վերաբերյալ: Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով՝ (Շահառուին) անձամբ հանձնելու միջոցով կամ (Շահառուի)՝ Պայմանագրում նշված հասցեով փոստային առաքմամբ, տրամադրում է (Շահառուին):

15.7. Ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և (Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել: Այն դեպքում, երբ Ապահովագրողի կողմից կայացված որոշումը շահագրգիռ անձի կողմից վիճարկվում է, ապա հատուցման տրամադրումը կասեցվում է մինչև բողոքարկման գործընթացով վերջնական ակտի կազմումն ու ուժի մեջ մտնելը:

15.8. Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Շահառուին՝ վերջինիս կողմից նշված հասցեով կամ տրվում առձեռն՝ տրման մասին համապատասխան փաստաթուղթ կազմելով:

15.9. Ապահովագրական հատուցման գումարը չի կարող գերազանցել վնասի գումարը, բացառությամբ Ապահովագրողի կողմից վնասի նվազեցման նպատակով կատարված ծախսերը:

15.10. Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին Ապահովագրողը ապահովագրել է իր մասնագիտական պատասխանատվությունը մի քանի ապահովագրական ընկերություններում (կրկնակի ապահովագրություն), և այդ պայմանագրերը գործել են պատահարը տեղի ունենալու օրվա դրությամբ, ապա ապահովագրական հատուցումը չի կարող գերազանցել պատճառված վնասի չափը: Այդ պարագայում ապահովագրական ընկերություններից յուրաքանչյուրը վճարում է ապահովագրական հատուցում՝ իր կնքած Ապահովագրության պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի և բոլոր ապահովագրության պայմանագրերում սահմանված ապահովագրական գումարների հանրագումարի հարաբերության համամասնությամբ:

15.11. Եթե ապահովագրավճարի առաջին և հերթական վճարման միջև ընկած ժամանակահատվածում (այն դեպքում, երբ ապահովագրության պայմանագրում սահմանված է ապահովագրավճարի տարաժամկետ վճարում) տեղի է ունեցել ապահովագրական պատահար, Ապահովագրողն իրավունք ունի մերժել հատուցումը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

15.12. Ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովագրողի կողմից՝ նվազեցնելով Ապահովագրության պայմանագրում նշված չհատուցվող գումարը (եթե այդպիսին նախատեսված է):

15.13. Ապահովագրական հատուցման գումարի մեջ ներառվում են նաև այն դատական կամ արտադատական ծախսերը (գործի վարման համար անհրաժեշտ և նպատակահարմար ծախսերը, ներառյալ իրավաբանների, փաստաբանների և փորձագետների ծառայությունների ծախսերի վճարումը) որոնք նախապես համաձայնեցված են եղել Ապահովագրողի հետ: Ծախսերը, որոնք թվարկված են սույն կետում հատուցվում են Պայմանագրում նշված ապահովագրական գումարի, իսկ եթե առկա է ենթասահմանաչափ մեկ պատահարի գծով, ապա այդ գումարի 10%-ի սահմաններում, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

15.14. Մեկ կամ մի քանի ապահովագրական պատահարների հետևանքով տրվող ապահովագրական հատուցման գումարը չի կարող գերազանցել Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի չափը և առկա ենթասահմանաչափերը: Եթե Պայմանագրի գործողության ընթացքում իրականացվել է ապահովագրության հատուցում ապահովագրական գումարից պակաս չափով, ապա Պայմանագիրը շարունակում է իր գործողությունը՝ Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի և վճարված ապահովագրական հատուցման տարբերության չափով:

15.15. Ապահովագրական հատուցման վճարումը կարող է կասեցվել, եթե Ապահովադրի, և/կամ նրա ներկայացուցչի և/կամ Պատասխանատու անձի և/կամ Շահառուի նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ կապված պատահարի առաջացման հետ, ինչպես նաև օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում:

16. ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

16.1. Ապահովագրական հատուցում ստանալու նպատակով Ապահովադիրը և կամ Շահառուն պետք է ներկայացնի Ապահովագրողին հետևյալ փաստաթղթերը՝

16.1.1. Դեպքի պատճառը և հանգամանքները հաստատող փաստաթղթեր՝

ա) Ապահովագրության Պայմանագիրը,

բ) վնասի հատուցման պահանջի վերաբերյալ հայցային դիմում: Շահառուն դիմումի ձևը կարող է այն ստանալ Ապահովագրողից կամ նրա ներկայացուցչից:

գ) անկախ փորձագետի եզրակացությունը (առկայության դեպքում),

դ) եթե ապահովագրական պատահարը կարգավորվում է դատական կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կամ դրա պատճենը,

զ) այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահարը կարգավորելու համար, որոնց վերաբերյալ Ապահովագրողը գրավոր պահանջ է ներկայացրել, այդ թվում՝ բուժհաստատություններից, բժշկա-աշխատանքային փորձագիտական խորհրդի կողմից, սոցիալական ապահովության մարմիններից և այլն, ինչպես նաև հաշվի առնելով վնասի չափը հաստատող տեղեկանքները, հաշիվները և այլ փաստաթղթերը:

16.1.2. Վնասի չափը հաստատող փաստաթղթեր՝

ա) ֆինանսական փաստաթուղթ (հաշիվ-ապրանքագիր, հաշիվ-տեղեկանք) և/կամ տեղեկանք՝ տրված օրենսդրությամբ սահմանված կարգով նման գործունեություն իրականացնող անձի կամ կազմակերպության կողմից կամ

բ) եզրակացություն կամ ակտ կամ հաշվետվություն՝ տրված անկախ փորձագետի կողմից,

գ) առկայության դեպքում Ապահովադիրը և/կամ Շահառուն պարտավոր են ներկայացնել կրած վնասների գումարների չափը հաստատող և հիմնավորող փաստաթղթեր, որոնց հիման վրա կկատարվի ապահովագրական հատուցման գումարի հաշվարկը՝ կախված ապահովագրական պատահարի բնույթից:

դ) եթե Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ ծախսն իրականացվել է Ապահովադրի կողմից ինքնուրույն, ապա անհրաժեշտ է ներկայացնել կատարված ծախսը հիմնավորող հետևյալ ֆինանսական փաստաթղթերը.

- պայմանագիր և/կամ հաշիվ-ապրանքագիր և
- դրամարկղի մուտքի օրդեր՝ կանխիկ վճարման դեպքում կամ
- բանկի վճարման հանձնարարագիր՝ փոխանցումով վճարելու դեպքում:

16.1.3. Ապահովադրի կամ Շահառուի բանկային տվյալները՝ հատուցումը փոխանցումով ստանալու դեպքում:

16.1.4. այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց ներկայացման անհրաժեշտության որոշումն ընդունում է Ապահովագրողը՝ կախված ապահովագրական պատահարի բնույթից և վնասի չափից:

16.2. Նշված փաստաթղթերով ներկայացված վնասի չափը Ապահովագրողի համար կրում է տեղեկատվական բնույթ, և եթե Ապահովագրողը համաձայն չէ նշված վնասի չափի հետ, կամ եթե Շահառուն ի վիճակի չէ ներկայացնել վնասի չափը հիմնավորող փաստաթուղթ, ապա Ապահովագրողն իրավունք անձամբ որոշել վնասի չափը կամ դիմել անկախ փորձագետի ծառայությանը՝ վնասի չափը պարզելու նպատակով:

16.3. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է պատահարի վերաբերյալ Պայմաններով սահմանված փաստաթղթերը ներկայացնել Ապահովագրողին գրավոր հայցային դիմում ներկայացնելու օրվանից սկսած 2 (երկու) ամսվա ընթացքում:

16.4. Նշված ժամկետում Ապահովադրի (Շահառուի) կողմից Պայմաններով սահմանված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում Ապահովագրողը, Պայմանների համաձայն, կարող է մերժել ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում:

16.5. Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին և/կամ նրա կողմից լիազորված փորձագետին ներկայացնել այն բոլոր փաստաթղթերը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են ներկայացված հայցի (ուսումնասիրվող վնասերի) հետ:

16.6. Բոլոր այն դեպքերում, երբ վնաս առաջացնող հանգամանքների բացահայտմանը ներգրավված են ոստիկանությունը, դատախազությունը կամ իրավապահ այլ մարմիններ, Շահառուն պարտավոր է ներկայացնել քրեական գործի (վարույթի) հարուցման, հարուցումը մերժելու վերաբերյալ որոշման պատճենները:

16.7. Այն դեպքում, երբ Ապահովադիրը և/կամ Շահառուն գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ հիմնավոր պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև վեց ամիս ժամկետով: Նշված ժամկետում Ապահովադրի և/կամ Շահառուի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացվելու դեպքում ապահովագրական հատուցումը ենթակա է մերժման:

16.8. Սույն գլխի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցումը:

17. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ, ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

17.1. Ապահովագրողը, պատահարի տեղի ունենալուց հետո, իրավունք ունի դիմել անկախ փորձագետների՝ ապահովագրական պատահարի պատճառները բացահայտելու և վնասի չափը որոշելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա:

17.2. Պայմանագրի Կողմերից յուրաքանչյուրը կրում է իր կողմից նշանակված փորձագետի (սյուրվեյերի) ծառայությունների վճարման ծախսերը:

17.3. Եթե Ապահովագրողին և Շահառուին վնասի կարգավորման ընթացքում չի հաջողվել համաձայնության գալ վնասի և/կամ հատուցման չափի վերաբերյալ, սակայն Կողմերի համաձայնությամբ հայցը դեռ գտնվում է արտադատական կարգով կարգավորման փուլում, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի գրավոր ձևով պահանջել ապահովագրական պատահարի տեղի ունենալու պատճառները պարզող փորձաքննության անցկացում: Այն դեպքում, երբ երկու Կողմերն էլ հետաքրքրված են փորձաքննության անցկացման մեջ, դրա իրականացման ծախսերը բաշխվում են Կողմերի սահմանած համամասնությամբ:

17.4. Այն դեպքում, երբ ապահովագրական հատուցում վճարելուց հետո պարզվի, որ Շահառուն իրավունք չունի ապահովագրական հատուցում ստանալ, նա պարտավոր է վերադարձնել Ապահովագրողին արդեն իսկ վճարված ապահովագրական հատուցման գումարը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

18. ԾԱՆՈՒՑՈՒՄ

18.1. Բոլոր ծանուցումները, որոնք Ապահովադիրը պետք է իրականացնի Պայմաններին և/կամ Պայմանագրի այլ պայմաններին համապատասխան, պետք է հաստատվեն գրավոր ձևով, եթե այդ ծանուցումները կատարվել են բանավոր, հեռախոսով, հեռագրով կամ այլ միջոցներով: Ծանուցման ամսաթիվ ասելով՝ հասկանում ենք այն ամսաթիվը, որով ստացվել է ծանուցումը:

18.2. Պայմանագրի բովանդակությանը վերաբերող թողարկված Համաձայնագրերը վավերական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարվել են գրավոր ձևով:

19. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

19.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը:

19.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

19.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Պայմանագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա պարտավոր է ապացուցել այն Կողմը, որի պարտականությունների իրականացմանն է խոչնդոտում նման ազդեցությունը:

20. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

20.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, վեճերը լուծվում են համաձայն ՀՀ Օրենսդրության:

20.2. Վիճելի հարցերի լուծման ժամանակ Պայմանագրի դրույթները գերակա են Պայմանների դրույթների նկատմամբ:

20.3. Վեճերի առաջացման դեպքում Պայմաններով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

20.4. Պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են գրավոր ձևով՝ համաձայնագիր թողարկելու միջոցով: